ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Երևանի հիմնադրման 2750-ամյակի առթիվ)

Պրոֆ. Կ. Դ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Վերջին տասնամյակների ընթացքում Երևանն ընդարձակվելով իր մեջ ընդգրկեց նաև շրջապատի մի քանի գյուղերը՝ Նորքը, Նորագավիթը, Շենգավիթը, Զաբրախը, Քանաքեռը, Ավանը և ուրիշները, որոնցից շատերը նախկինում երբեք քաղաքի մաս չէին կազմել։

Ավանում կա մի նշանավոր տաճար, որը Երևանի միջնադարյան սակավաթիվ հուշարձանների շարքում իր անցյալով և ճարտարապետական ոճով առանձնահատուկ տեղ է գրավում։ Նրանով հայ ճարտարապետության մեջ հիմք դրվեց մի նոր ոճի, որն արագ թափով տարածվեց Հայաստանում, թափանցեց Վրաստան և իր կատարելության գագաթնակետին հասավ 618 թվականին Վաղարշապատում (Էջմիածին) կառուցված Հռիփսիմե տաճարի հորինվածքի մեջ։ Այդ ոճի շենքերից Վրաստանում նշանավոր դարձավ Մցխեթի ս. Խաչ եկեղեցին։

Ներկա հոդվածում կանգ ենք առնելու Ավանի տաճարի միայն կառուցման հանգամանքների և տարեթվի վրա, առանց շոշափելու նրա ճարտարապետական հորինվածքի խնդիրը։

* * *

V դարում Հայաստանը զրկվեց իր ազգային պետականությունից և Բյուզանդիան ու Պարսկաստանը տիրեցին նրան՝ իրար մեջ բաժանելով երկիրը, բայց այդքանով չբավարարվեցին. Պարսկաստանը արևելյան կողմից, իսկ Բյուզանդիան արևմուտքից ամեն միջոց գործ դրին հայ ժողովրդին կրոնով ու դավանանքով ևս իրենց ենթարկելու համար։

Երբեմն բռնությամբ, երբեմն սիրաշահելով պարսիկներն աշխատում էին Հայաստանում արմատավորել իրենց դավանած մազդեական հեթանոսությունը, իսկ դրան հակառակ, բյուզանդացիք ձգտում էին քրիստոնեություն դավանող հայ ժողովրդի միջից վերացնել կրոնական այն խտրությունը, որ գոյություն ուներ իրենց և հայերի միջև, որ հայերը արհեստականորեն ստեղծել էին տարբերվելու համար հույներից։

Վաղուց արդեն Բյուզանդիայի գերիշխանության ներքո գտնվող Փոքր Հայքում հատուկ օրենքներ էին սահմանվել հայերին կազմալուծելու, իշխանական տների ուժը ջլատելու և ոչնչացնելու համար։ Հայ ժողովուրդը ծայրահեղ դժվարին պայմաններում պայքարում էր երկու կողմերի դեմ, պահպանելու համար իր ինքնուրույնությունը։

Դարեր տևող այդ պայքարը խիստ սուր բնույթ էր ստացել VI դարի վերջին տասնամյակներին։

Պարսկաստանն Ավարայրի և նրան հետևող մյուս պատերազմներից հետո հաշտվել էր հայերի դավանած ազգային երանգ ունեցող քրիստոնեության հետ[1]։ Նույնը չէր կարելի ասել Բյուզանդիայի մասին, որի կայսրերը ոչինչ չէին խնայում Հայաստանը քաղկեդոնական դարձնելու համար, իսկ քաղկեդոնականությունը, ինչպես ճիշտ էին հասկանում հայերը, մի ահավոր միջոց էր՝ հայերին և մյուս ժողովուրդներին իրենց հետ միաձուլելու համար։

Միայն հայերի նկատմամբ չէր, որ բյուզանդական կայսրությունն այդ քաղաքականությունն էր վարում։ Նա հայերի հետ միևնույն դավանանք ունեցող վրացիների ու աղվանների մեջ ևս քաղկեդոնական սերմեր էր տարածում և աշխատում էր իրար բարեկամ այդ ժողովուրդներին իրարից բաժանել և այնպես տիրել նրանց։

Վերջ ի վերջո VII դարի սկզբներին, Կյուրոնի կաթողիկոսության ժամանակ, վրացիներն անցան հունական դավանանքի և հրաժարվեցին հայկական եկեղեցուց, իսկ աղվանները մինչև վերջ կապված մնացին հայերին։

Հետաքրքիր են մեր մատենագիրների բազմաթիվ վկայությունները բյուզանդացիների բորբոքած կրոնական վեճերի վերաբերյալ, որոնք ավելի սուր բնույթ ստացան Մորիկ կայսեր ժամանակ (582—602), որը, ինչպես հայկական պատմիչներն են հաղորդում, ծագումով հայ էր և օշականցի[2]։

Սեբեոսի պատմության մեջ քաղվածաբար մեջ բերած Մորիկ կայսեր մի նամակից իմանում ենք, որ հայերը ծանոթ էին բյուզանդական կայսրության բուն նպատակին՝ կաղմալուծել և ոչնչացնել հայերին և Հայաստանը տիրել առանց հայերի։

Մորիկ կայսրը, ըստ Սեբեոսի, պարսից Խոսրով արքային գրում է հայերի մասին. «Յայնմ ժամանակի թագաւորն յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ թագաւորն պարսից դիր ամբաստան վասն իշխանացն ամենայն Հայաստանեաց և պաւրաց նոցա։ «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն։ Բայց եկ՝ ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ և դու զքոյո ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել։ Զի եթէ մեռանին թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ։ Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանդչել ոչ լինի»[3]։

Կրոնական վեճերն իր օգտին լուծելու նպատակով, Բյուզանդիան հաճախակի ժողովներ էր հրավիրում, որոնց մասնակցում էին բացի հայերից և հույներից նաև վրացիք, աղվանները, ասորիները։

Այդպիսի մի ժողով առաջին անգամ գումարել էին Կոստանդնուպոլսում, իսկ հետո այդ ժողովների կենտրոնը դարձրին Թեոդուպոլիսը, որ ավելի մոտ էր արևելյան քրիստոնեական պետությունների սահմաններին։ Թեոդուպոլսում

---

1 Հեթանոս Պարսկաստանը թեև ստիպված հայերին թույլ էր տվել քրիստոնյա մնալու, բայց ուրբեք չէր հանդուրժում, երբ պարսիկներն էին քրիստոնյա դառնում. VI դարի կեսերին քրիստոնեություն ընդունած մի պարսիկի Դվինի մարզպանը սպանում է, իսկ հայոց կաթողիկոսը նրա դիակը թաղում է մայր եկեղեցու մոտ և վրան էլ կառուցում մի միանավ բազիլիկ տաճար։ Այդ պարսիկը, որ ստացել էր Հիզտբուզիտ անունը, հայ եկեղեցու ճանաչած վկաներից մեկն էր։ Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 64։

2 «Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, էջ 47—50։ Նույնը, բայց համառոտ, տե՛ս նաև «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան՝ պատմութիւն տիեզերական», ՍՊԲ, 1885, էջ 141։

3 «Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1913, էջ 75։

գումարվեցին մի քանի ժողովներ, որոնց մեջ հույն հոգևորականները ջանում էին ապացուցել, որ իրենց և հայկական դավանանքի միջև էական տարբերություններ չկան և եղած տարբերությունները փոխադարձաբար վերացնելուց հետո կարելի է ընդունել մի դավանանք։

VI դարի վերջերին և VII-ի սկզբին տեղի ունեցող այդ վեճերի մասին Ստեփանոս Օրբելյանն իր պատմության մեջ գրում է. «Յայնմ ժամանակի բորբոքէր չարահնար աղանդն Քաղկեդոնի ի ձեռն բուռն թագաւորաց Յունաց և կամէր իբրև զքաղցկեղ ճարակել զաշխարհս Հայոց և զԱսորւոց ուղղափառաց, եւ առաւել ի թագաւորելն Մօրկայ։ Եւ դեսպանք և հրաւիրակք հոռոմոց երբէք ու դադարէին յերևեկութեանց, բազում անգամ հրաման տային ժողովոյ, մի անգամ ի Կոստանդնուպօլիս կոչեցին և երիցս անգամ ի Թէոդուպօլիս. և դեմ յանդիման և ուժգին մեծամեծ հարցափորձութիւնք լինէին. և էր յայնմ ժամանակի Հայաստանի դպրութիւնքս նորոգ և չէն. և յոյն լեզուին և դպրութեանն յոյժ հմուտք և տեղեակք։ Եւ որպէս հարցանեին նոքա՝ առաւել իմն պատասխանի լսէին»[4]։

Ինչպես տեսնում ենք, հայ հոգևորականները հունարեն լեզվի ու գրականության և կրոնական խնդիրների վերաբերյալ իրենց գիտությամբ ոչնչով չեն զիջել հույներին և դրանով իսկ, վեճերի ժամանակ, համարձակորեն պաշտպանել են իրենց դավանանքն ու ինքնուրույնությունը։

Բյուզանդական կայսրների հրավիրած ժողովները թեև իրենց նպատակին չէին հասնում և վիճելի հարցերը լուծում չէին ստանում, բայց դրանց միջոցով Բյուզանդիան կարողանում էր ձեռք բերել կողմնակիցներ, մանավանդ բյուզանդական մասում ապրող հայ կրոնավորների շրջանում։ Այդ վեճերը երկպառակություն էին առաջացնում նաև հայերի և վրացիների միջև։

Բյուզանդիան դեռևս վաղուց իր գաղտնի գործակալներն էր ուղարկում Հայաստան, որպեսզի կրոնավորների և ժողովրդի մեջ հայկական եկեղեցին բյուզանդականին միացնելու վերաբերյալ հող նախապատրաստեն և կողմնակիցներ հավաքագրեն։ Միշտ չէ, որ այդ գաղտնի գործակալների չար աշխատանքը թաքուն է մնացել հայ եկեղեցական գործիչների աչքից։

Ստեփանոս Օրբելյանը գրում է. «Յաւուրս տեառն Վրդանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, եկին ոմանք նեստորականք և Քաղկեդոնիկք, և խաբկանօք բնակեցան յաշխարհս Սիսական և յԱղվանս։ Ապա լուեալ տեառն Յովհաննիսի ընդոստոյց թղթովք և ծանոյց գվնասն որ ընդ յարդիւ ծածկեալ կայր. յորմէ զարհուրեալ տեառն Վրդանիսի՝ հալածական արար ի վիճակէ իւրմէ. և մեծաւ նզովիւք փակեաց զի մի իշխեսցեն թողացուցանել ի սահմանս իւրեանց...»[5]։

Այս միջոցներով ևս չբավարարվեց Բյուզանդիան և որոշեց հայերին երկու մասի բաժանել և մի նոր կաթողիկոսություն հիմնել Հայաստանի բյուզանդական մասում, այն հույսով, որ շուտով հայերը բոլորը միասին կընդունեն նրա հոգևոր իշխանությունը։ Այդ նպատակով Հայաստանի բյուզանդական մասում ապրող հայերի համար կաթողիկոս ձեռնադրեցին Հովհան անունով մի հոգևորականի, որը հեղինակություն ուներ ժողովրդի աչքում և զարմանալի չէ, որ մեր մատենագիրները նրա անձի մասին գովասանքով են խոսում։ Դրասխա-

---

4 «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 101։

5 Նույն տեղում, էջ 97—98։

նակերտցին այս Հովհանին անվանում է «այր ճշմարիտ և արդար էր և առաքինի ի վարս, և բնաւ ոչինչ շեղեալ զկնի քաղկեդոնական աղանդիցն»[6]։

Նույն խոսքերով է բնորոշում Հովհան Բագարանցուն նաև Վարդանը, անվանելով նրան «Այր սուրբ, որ բնաւ չէր խոտորեալ յաղանդն յունաց»[7]։

Այսօր մեր ձեռքի տակ ունեցած կցկտուր և իրարամերժ տվյալներով դժվար է որոշել, թե Հովհան հակաթոռն ինքն անձնապես ի՞նչ տեսակետ է ունեցել VI դարում բոլորին հուզող կրոնական հոսանքների մասին, համակրե՞լ է քաղկեդոնական աղանդը թե ոչ, բայց քանի որ ինքը հույների հաստատած աթոռի գահակալն էր և, ինչպես հաղորդում են մեր պատմիչները, Մորիկ կայսեր նշանակած մարդը, այն էլ հակաթոռ, որ Դրասխանակերտցու ճիշտ բնորոշումով հայոց կաթողիկոսության աթոռը երկու հատվածի էր բաժանել և խախտել հայոց կրոնական միասնականությունն ու ինքնուրույնությունը, նրա դերը հույժ բացասական և վնասակար էր, մանավանդ, որ նա կաթողիկոս դարձավ այն ժամանակ, երբ 16 տարի արդեն գահակալել էր Մովսես Եղվարդեցին և դեռ շարունակում էր իր կաթողիկոսությունը Դվինի մայր աթոռում։

Դվինի աթոռն այդ ժամանակ մարզպանների և պարսից արքունիքի հատուկ հոգածության առարկան էր։ Ամեն տեսակ զիջումներ անում էին, որպեսզի նա Բյուզանդիայի ազդեցության տակ չընկնի։

Այս տեսակետով հետաքրքիր է Դրասխանակերտցու պատմածը Դվինի կաթողիկե եկեղեցու վերաշինության մասին 607 թ., Վրկանա նախկին մարզպան Սմբատ Բագրատունու ձեռքով։

Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ երբ Սմբատ Բագրատունին ուզեց փայտով ու աղյուսով շինված Դվինի մայր եկեղեցին քանդել և նրա փոխարեն «Սրբոյ կոփածոյ քարամբք, գեղեցկադիր շինուածիւ, կրով ձուլեալ ր մի» մի նոր և մեծ եկեղեցի կառուցել, Դվինի պարսից բերդապահը դիմում է Խոսրով II-ին, որպեսզի վերջինս արգելի եկեղեցու շինությունը, պատճառաբանելով, որ եկեղեցին կարող է բերդի համար վնասակար լինել (հարձակվող թշնամին եկեղեցին կարող էր օգտագործել իբրև ամրություն՝ բերդը պաշարելու ժամանակ)։ Խոսրովը ոչ միայն չի արգելում եկեղեցու կառուցումը, այլև հրաման է տալիս բերդը քանդելու և եկեղեցին նույն տեղում շինելու մասին[8].

Պարսից արքան դրանով ոչ միայն Սմբատ Բագրատունուն էր պարտահատույց լինում նրա բազմաթիվ քաջագործությունների համար՝ պարսից ծառայության մեջ, այլև աշխատում էր հայ եկեղեցու կարևորությունը նշել։

Դրասխանակերտցուն հակառակ, դեպքերին գրեթե ժամանակակից Սեբեոսը Հովհան հակաթոռ Բագարանցուն ներկայացնում է իբրև քաղկեդոնական։ Նա գրում է. «Բաժանեցաւ ապա և Աթոռ կաթողիկոսութեանն յերկուս. անուն միոյն Մովսէս. և միւսոյն՝ Յովհան։ Մովսէս ի պարսից կողմանէ, և Յովհան՝ Յունաց։

Եւ Յովհան ընդ նոսա (ընդ յոյնս—Կ. Ղ.) հաղորդեալ միաւորեցաւ, բայց Մովսէս ամենևին ոչ լինէր ի նոսա հուպ»[9]։

Գրեթե նույնն է ասում X դարի պատմիչ Ուխտանես եպիսկոպոսը։ Նա գրում է. «...Ի բառնալ թագաւորութեանն հայոց բաժանեալ եղև աշխարհս մեր ի

6 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ պատմութիւն հայոց», էջ 73։

7 «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ պատմութիւն Տիեզերական», Մոսկվա, 1861. էջ 84։

8 Դրասխանակերտցի, էջ 71։

9 Սեբեոս, էջ 84։

մէջ հոռոմոց և պարսից. և նստուցին կողմն հոռոմոց հակառակաթոռ Մովսիսի կՕհան ոմն երկաբնակ, որ ոչ համարեցաւ ի թիւ հայրապետացն հայոց։ Որ ապա և յետոյ Աբրահամու եղև հակառակ»[10]։

Մաղաքիա Օրմանյանն էլ այն համոզման է, որ Հովհան Բագարանցին քաղկեդոնական է եղել։ Մեջ բերելով Դրասխանակերտցու և Վարդանի կարծիքներն այն մասին, որ Հովհանը քաղկեդոնական չի եղել, նա գրում է. «Արդ, ինչպե՞ս ընդունիլ որ հակաքաղկեդոնիկ մնացող մը՝ կրցած ըլլա Մորիկի պաշտպանությունը վայելել։ Որչափ ալ կարևոր ըլլա պատմաբանին (Դրասխանակերտցու — Կ. Ղ.) վկայության կշիռը, մենք պիտի պնդենք Յովհան Բագարանցին քաղկեդոնական դավանության համակերպող և հետևող մը ըսել, մեզի հիմ ունենալով Սեբեոսի վկայությունը, թէ Յովհաան ընդ նոսա, այսինքն ընդ հույնս, հաղորդեալ միաւորեցաւ»[11]։

Ասողիկն էլ գրում է, որ Մորիկն է Հովհան Բագարանցուն կաթողիկոս կարգել հունական մասի վրա. «Իսկ կայսր Մ՝որիկ զՅովհան ոմն նստուցանէ կաթողիկոս մասինն Յունաց. և Աբրահամ նստէր ի Դուին»[12]։

Ավանի հակաթոռ կաթողիկոսության հիմնադրման մասին Դրասխանակերտցին տալիս է մանրամասն տեղեկություն։ Նա գրում է. «Յետ այսորիկ ըստ հրամանի կայսերն Մ՝օրկայ զՅոհան ոմն ի գաւառէ Կոգայ ի Բագարան գեղջէ կացուցանեն կաթողիկոս Յունական կողմանն՝ բնակեցուցանելով զնա ի քաղաքաղիւղն Աւան, ուր և շինեացն իսկ ինքնին Յոհան զպայծառակերտ քաւարանն սուրբ և շուրջանակի նորա յարդարեաց կալուածս կայանի իւրոյ։ Իսկ մեծ հայրապետն Աբրահամ ըստ նախասաց բանին ի Դուին քաղաքի բնակէր ի Պարսից բաժնի անդ. վասն զի գետն Ազատ սահման բաժնիցն երկոցունց ընդ մէջ հատանէր»[13]։

Այսպիսով տեսնում ենք, որ Ավանի տաճարը կառուցել է Հովհան Բագարանցին «և շուրջանակի նորա յարդարեաց կալուածս կայանի իւրոյ»։

Այստեղ կալուածք կայանի իւրոյ, որ եկեղեցու շրջապատում հարդարել է Հովհան հակաթոռը, պետք է հասկանալ այն իմաստով, որ նա եկեղեցու շրջապատում կառուցել է իր կաթողիկոսարանը (իր կայանը) և նրա հարակից շենքերը՝ միաբանների բնակարանները և այլն, որոնք իրոք գոյություն ունեն տաճարի հյուսիսային և մյուս կողմերում։ Այդ շենքերի մասին այստեղ որոշակի բան չենք կարող ասել, որովհետև մասնակի պեղումները, որոնք կատարվել են մինչև այժմ, գլխավորապես նպատակ են ունեցել ոչ թե կաթողիկոսարանի և պալատական շենքերի ավերակների բացագատումը, այլ բուն տաճարի ներսը և արտաքին պատերը փլատակումներից գոյացած քարակույտերից և հողի շերտերից մաքրելը։ Այդ պեղումները կատարվել են նաև պատերից ընկած քարերը գտնելու և իրենց տեղում վերադարձնելու նպատակով։ Հողային այդ աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել տաճարի շրջապատում կառուցված շենքերի պատեր՝ տարբեր բարձրությամբ պահպանված, որոնց մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ այդ շենքերը բացելու նպատակով այնտեղ հատուկ պեղումներ կատարվեն։ Բայց շենքերի ավերակնե-

10 Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 63։
11 «Ազգապատում», գրեց Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Կ. Պոլիս, 1909, հատ. Ա, էջ 579։
12 Ասողիկ, էջ 86։
13 Դրասխանակերտցի, էջ 72—73։

որ կան և Դրասխանակերտցին, իբրև ականատես, միայն մի երկու բառով է հիշատակել այդ մասին, մեծ կարևորություն չտալով այդ խնդրին։

Անկախ պատմագիրների հիշատակությունից, պետք է համոզված ասենք, որ կաթողիկոսանիստ տաճարը չէր կարող չունենալ հարակից շենքեր, որոնց մեջ կարևոր տեղ էին գրավելու վեհարանը, միաբանների բնակարանները, կաթողիկոսական դիվանը, մատենադարանը, դպրոցական շենքը, ինչպես նաև տնտեսական բնույթի կառուցվածքները՝ ամբար, պահեստ, մառան, աղբյուր։

Բացի արևելյան կողմից, եկեղեցին դեռ այժմ էլ շրջապատված է շենքերի ավերակներով։ Եկեղեցու արևելյան հիմնապատերը գտնվում են բավականին խորն ընկած գյուղական ճանապարհի եզրին և եթե այդ կողմում եկեղեցուն կից շենքեր գոյություն ունեցած լինեին, նրանց հետքն անգամ մնացած չէր լինի տեղում, բայց այդ կողմում, որ հավատացյալներն անվանում են աղոթարան, հավանաբար եկեղեցուն կից ոչ մի շինություն գոյություն չի ունեցել, որովհետև, ըստ սովորության, ավագ խորանի ետևը որևէ կառուցում չէին անում, որպեսզի արևի ճառագայթներն անարգել թափանցեն եկեղեցու մեջ արևելյան լուսամուտներից, իսկ դրա համար անհրաժեշտ էր որոշ ազատ տարածություն։

Ճիշտ է, ավելի ուշ դարերում եկեղեցիներն ունենում էին ժամատներ և այլ կից շինություններ, բայց VI և VII դարերում դեռևս այդպիսի շենքեր չէին կառուցում։ Տաճարի մյուս երեք կողմերում կան փլատակված շենքերի հիմնապատերի մնացորդներ և քարակույտեր, բայց դրանց մի մասը առաջացել է տաճարից ավելի վաղ ժամանակներում շինված շենքերից։

Եկեղեցու արևմտյան պատին զուգահեռ ի հայտ եկած երկարաձիգ եռաստիճան հիմնապատը և մի քանի քանդակազարդ բեկորներ ցույց են տալիս, որ այդտեղ գոյություն են ունեցել ավելի հին, հավանաբար IV—V դարերում կառուցված շենքեր և Հովհան Բագարանցին իր աթոռը հիմնադրել է ոչ թե ամայի վայրում, այլ ինչ որ հին շինությունների տեղում։

Ինչպես երևում է, տաճարի տեղի ընտրությանը Բագարանցին մեծ նշանակություն է տվել։

Բյուզանդական մասի սահմանագլխին հակաթոռ կաթողիկոսություն հիմնելն անհրաժեշտ է եղել Դվինի աթոռի դեմ մոտիկից պայքարելու համար։ Կարծում ենք այդ իմաստով պետք է հասկանալ Դրասխանակերտցու այն խոսքերը, թե այդ երկու կաթողիկոսությունները «հակաթոռ գոլով՝ յերկուս հատուածս ճեղքեալ լինէր միատարր միութիւն հայրապետական աթոռոյն, և ապա ոչ սակաւ հակառակութիւն կրեալ լինէին կողմանքն երկոքին»[14]։

Կարևոր էր նաև տաճարի կառուցման կետի ընտրությունը։

Ժողովրդի աչքում Հովհանի կառուցած տաճարը արժեք կունենար միայն այն դեպքում, եթե նա հիմնադրվեր նախապես ճանաչված սրբավայրում։ Այդ է պատճառը, որ Բագարանցին շրջապատի ազատ տարածությունները թողած իր եկեղեցին կառուցել է խոշոր շինությունների տեղում, որոնք անշուշտ կրոնական նշանավոր շենքեր են եղել։

Դժբախտաբար Ավանի այսօրվա բնակիչները բնիկ տեղացիներ չեն և հին տաճարի վերաբերյալ տեղական ավանդություններ ծանոթ չեն, նույնիսկ տաճարի բուն անունը նրանց հայտնի չէ։

---

14 Դրասխանակերտցի, էջ 73։

Այսօրվա ավանցիները, ինչպես հաղորդում է Թորամանյանը, հարկավ, այդ մասին տեղեկանալով շրջապատի բնակչությունից, գաղթել են Պարսկաստանից Պասկևիչի պատերազմի (1826—1828 թթ.) ժամանակ, հաղիվ 15—20 տուն։ Նրանց գալու օրերին Ավանի տաճարը ավերակ է եղել և կոչվել է Միրանավոր (որ ստվածամոր ածականներից մեկն է)։ Թորամանյանն իր այդ տեղեկությունները գրի է առել 1909 թ., ճամփորդական օրագրի մեջ[15]։

Հովհաննես եպ. Շահխաթունյանցը 1842 թ. հրատարակած աշխատության մեջ հաղորդում է, որ Ավան գյուղն ունի ընդամենը 18 տուն բնակիչ[16], իսկ Ղևոնդ Ալիշանի տվյալներով 1873 թ. Ավանն ունեցել է 50 տուն, 316 երկսեռ բնակիչով[17]։ 1931 թ. մարդահամարի համաձայն Ավանում ընտանիքների թիվը հասել էր 335-ի, իսկ բնակչությանը՝ 954-ի[18]։ Այժմ Ավանը Երևան քաղաքի թաղամասերից մեկն է և մտնում է Մյասնիկյանի շրջանի մեջ։

Հիմա աշխատենք պարզել, թե ե՞րբ է կառուցվել Ավանի տաճարը։ Դա ունի մեծ կարևորություն, որովհետև այդ տաճարով հիմք է դրվել մի նոր ոճի, որը հայկական երևույթ լինելով, տարածվեց նաև հարևան երկրներում։

Ավանի տաճարը կառուցման արձանագրություն այժմ չունի։

Ընդհանրապես VI և VII դարերի հայոց եկեղեցիներն ունենում էին կառուցման վերաբերյալ արձանագրություն, որոնք գրված էին լինում կամ մի տողով, պատերի ամբողջ երկարությամբ և կամ մի որևէ ամփոփ տեղում մի քանի տողով։ Կառուցման միատող արձանագրությունները փորագրվել են միայն VI և VII դդ. տաճարների վրա։ Հետագայում բոլորովին չկան այդպիսի արձանագրություններ։ Սովորաբար նրանք սկսվում են տաճարի հարավային պատի սկզբին, շարունակվում են մյուս կողմերում և վերջանում այնտեղ, որտեղ ավարտվում է նրանց գրությունը։

Ավանի տաճարը կառուցման միատող արձանագրություն չի ունեցել։ Եթե այդպիսի արձանագրություն եղած լիներ, նրա որոշ մասերը պետք է պահպանված լինեին հարավային, ինչպես նաև հյուսիսային պատերին, որոնք պահպանվել են եթե ոչ լրիվ, գոնե այն չափով, որ եթե այնտեղ այդպիսի արձանագրություն եղած լիներ, նրա մասերը պետք է մնացած լինեին տեղում և արձանագրած քարերից մի քանիսն էլ պետք է ի հայտ գային տաճարի շրջապատի պեղումների ժամանակ։

Ավան գյուղը հնուց ի վեր հայտնի է եղել տուֆի հարուստ քարհանքերով. այդտեղի քարերով էլ կառուցվել են գյուղի և մերձակա բնակավայրերի միջնադարյան բոլոր հուշարձանները։ Տաճարի մեջ և նրա շրջապատում պատերից ընկած քարերը տեղի բնակիչները չեն տարել և օգտագործել իրենց տնտեսության մեջ։

Ավանցիք եկեղեցու ավերակների քարերին ձեռք չեն տվել ոչ միայն այն պատճառով, որ տաճարը համարել են սրբություն, որի քարերն օգտագործելու դեպքում կարող էր վնաս հասնել իրենց կյանքին և գույքին, այլև այն պատ-

15 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական հարտարապետության պատմության, Աշխատությունների երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 161։

16 Հովհաննես եպ. Շահխաթունյանց, Ստորագրություն կաթողիկե էջմիածին և հինգ գավառացն Արարատա, էջմ., 1842, Բ հատ., էջ 160։

17 Հ. Ղևոնդ Ալիշան, Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 285։

18 «ՀՍԽՀ բնակավայրերն ու աղգարնակությունը», Երևան, 1936, էջ 38։

ճառով, որ ավելի ձեռնտու էր նոր քար կտրել իրենց տանն ավելի մոտ գտնվող քարհանքից, քան թե պեղմամբ փլատակների տակից դուրս հանել հարյուրավոր տարիներ արևի տակ կարծրացած հուշարձանի քարերը։

Ամենայն հավանականությամբ Ավանի տաճարն սկզբնապես ունեցել է կառուցման արձանագրություն՝ քանդակված պատերից մեկի արտաքին երեսին։

Այդ արձանագրությունը չէր կարող գրված լինել արևմտյան պատին, որովհետև մինչև օրս նա կանգուն է իր քարերով վերաշարված վիճակում և նրա վրա կան մի քանի ընդարձակ արձանագրություններ պատի տարբեր մասերում։ Եթե կառուցման արձանագրություն լիներ, նա անպայման մնացած կլիներ տեղում, ինչպես մնացել են մյուսները։

Արձանագրությունը չի եղել նաև հյուսիսային կամ հարավային պատերին, որոնց վրա առհասարակ արձանագրություններ չկան և այդ երկու կողմերից տաճարը շրջապատված լինելով զանազան շինություններով, արձանագրությունը տեսնելու և ընթերցելու տեսադաշտ չի ունեցել։

Մնում է ենթադրել, որ կառուցման արձանագրությունը, եթե նա գոյություն է ունեցել, գրված է եղել արևելյան պատին, եկեղեցու արտաքին երեսին։ Չմոռանանք հիշել, որ եկեղեցու բոլոր հնագույն արձանագրությունները գրված են եղել այդ պատին, որոնց թվում նաև Եղր կաթողիկոսի դավանափոխության առթիվ պեղմամբ ի հայտ եկած արձանագրությունը, այն էլ ծածկագրած վիճակում, գրված 630-ական թթ. սկզբին[19]։

Կառուցման արձանագրության բացակայության պատճառով տաճարի շինության թվականը որոշելու ենք ճարտարապետական առանձնահատկությունների և մատենագրական տվյալների հիման վրա, հաշվի առնելով նաև ուսումնասիրողների կարծիքները։

Ավանի տաճարի կառուցման վերաբերյալ գլխավոր աղբյուրը Սեբեոսի պատմությունն է, որ գրեթե ժամանակակից է և հետագայի պատմիչները մեծ մասամբ նրանից են քաղել իրենց տեղեկությունները։

Այս հարցի համար կարևոր է նաև «Դիրք թղթոցը», որ դարձյալ ժամանակակից աղբյուր է և իր էջերում պարունակում է բազմաթիվ տեղեկություններ հայ-բյուզանդական դավանաբանական հարաբերությունների և վեճերի վերաբերյալ։

Սեբեոսը տեղեկություններ է հաղորդում Ավանի աթոռի հիմնադրման վերաբերյալ, իսկ տաճարի կառուցման մասին խոսում է միայն Հովհան Բագարանցու մարմինն այնտեղ թաղելու կապակցությամբ, ավելացնելով, որ Պարսկաստանում մեռնելուց հետո «բերաւ մարմին նորա ի գեւղն Աւան՝ յեկեղեցին. զոր ինքն շինեաց»[20]։

Հովհանի մահը տեղի է ունեցել պարսից Խոսրով Փարվեզի գահակալության 21-րդ տարում. նա գահակալել է 590 թ., հետևապես Հովհան Բագարանցու մահը տեղի է ունեցել 610/611 թթ.։

Պարսիկների վրեժխնդրությունից վախենալով, իր մահվանից տարիներ առաջ, Հովհան Բագարանցին փախել էր Կարին, իսկ այնտեղից էլ գերի էր տարվել Պարսկաստան Կարնո բնակչության հետ միասին, երբ պարսիկներն

---

19 Կարո Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը. Երևան, 1945, էջ 5։

20 Սեբեոս, էջ 123—124։

իրենց հետ տարան նաև ապահովության համար Կարին տարած հայոց եկեղեցու գանձերը։ Պարսիկ զորավար Աշոտը ոչ թե պատերազմից անմիջապես հետո գերի տարավ կաթողիկոսին դեպի Պարսկաստան, այլ մի երկու տարի հետո։ Դրասխանակերտցու ասելով՝ «Իսկ Աշոտ ոմն հրամանաւ Խոսրովայ հասեալ ի Հայս և դիմեալ ի վերայ՝ խորտակէր զզօրսն Յունաց, զի ոչ լինէր թիւ սպանելոցն ի դաշտին, և ինքն կալեալ զգործ պատերազմի ընդ Կարնոյ քաղաքի՝ առնոյր զնա։ Եւ յետ երկեամ մի ամաց զբնակիչս քաղաքին յԱհմատան փոխէ։ Եւ վասն զի ծերունի կաթողիկոսն Յոհան կայր ի փախստականութեան՝ վարեալ ի գերութիւն և անդէն վախճանեալ՝ բերաւ ի գիւղն Աւան, որ եդաւ մերձ յեկեղեցին, զոր իւր իսկ էր շինեալ»[21]։

Նշանակում է, Հովհանը գերեվարությունից առաջ երկու տարի էլ Կարինում մնացել է պարսկական իշխանության ներքո։ Եթե Հովհանի մահը տեղի է ունեցել 610/611 թթ. և նախքան այդ էլ նա երկու տարի Կարինում մնացած է եղել պարսիկների հաղթանակից հետո, և որոշ ժամանակ էլ մինչև իր մահը ապրել է պարսկական գերության մեջ, ուստի Հովհան Բագարանցու փախուստն Ավանից դնելու ենք 608/609 թթ. առաջ։

Այստեղ պետք է հաշվի առնենք մի հանգամանք ևս։ Այդ այն է, որ մեր մատենագիրներից ոմանց ասելով (Ասողիկ, էջ 86, Դրասխանակերտցի, էջ 72) Հովհանը ժամանակակից է եղել Աբրահամ կաթողիկոսին և պայքարել է նրա դեմ, իսկ Աբրահամը, ինչպես հայտնի է, կաթողիկոս է ձեռնադրվել 607 թ.։ Նշանակում է 607 թ. Հովհանը եղել է դեռևս Ավանում։

Աբրահամ կաթողիկոսի առաջին գործերից մեկը լինում է բյուզանդական իշխանության տակ անցած հայ հոգևորականների և իշխանների մասնակցությամբ հրավիրված ժողովը «Եւթն ու տասներորդ ամի Ապերուեզ Խոսրովու արքայից արքայի», որ համապատասխանում է մեր 607 թ.։ Այդ ժողովի վերաբերյալ փաստաթղթի մեջ, որ վերնագրված է «Զեռնարկ՝ զոր էտուն Աբրահամու հայոց կաթողիկոսի ի միաւորութեանն աշխարհիս հայոց, այնոքիկ որ էին ընդ իշխանութեամբ Հոռոմոց ի թագաւորութեանն Մաւրկան», հիշատակված են մասնակցողներից շատերի անունները։ Առաջնորդ եպիսկոպոսներից հետո թվարկված են մեծ իշխանները, որոնց հաջորդում են դարձյալ մի խումբ եպիսկոպոսներ, հավանաբար երկրորդական կարգի, որոնցից հետո գալիս են վանքերի երեցները։ Այս խմբի մեջ հիշատակված է Ավանի վանքի երեց Հունանիսը, որի անունը հանդես է գալիս էջմիածնի (որ «Զեռնարկի» մեջ «սրբոյ կաթողիկէ» է կոչված)[22], Հռիփսիմեի, Հովհաննավանքի, Օշականի, Եղվարդի

21 Դրասխանակերտցի, էջ 73—74։

22 607 թ., երբ գումարվել է այդ ժողովը, հայոց կաթողիկե եկեղեցին Դվինի մայր տաճարն էր, որն այդ նույն թվականին հայոց մարզպան Սմբատ Բագրատունին վերակառուցեց և նախկին անգմբեթ եռանավ բազիլիկ եկեղեցին վերածեց շեշտված կողմնային աբսիդներ ունեցող խաչաձև տաճարի, որի նորակառույց հսկայական գմբեթը պահվում էր դահլիճի կենտրոնում քարձրացող չորս մույթերի վրա։

«Զեռնարկի» մեջ էջմիածնի անունը չի տված, բայց հասկանալի է, որ սուրբ կաթողիկե-ն Դվինի մայր տաճարը չէր, որովհետև նա Հայաստանի պարսկական մասում էր գտնվում, իսկ ժողովին մասնակցում էին (բացի մարզպան Սմբատ Բագրատունուց և Աբրահամ կաթողիկոսից, որ ժողովի կազմակերպիչներն էին) միայն Հայաստանի հունական մասի հոգևոր և աշխարհիկ իշխանները։ Բացի այդ, հայտնի է, որ կաթողիկոսանիստ վայրի եկեղեցին վաներեց չի ունենում, այլ միայն եկեղեցական։

Աբրահամ կաթողիկոսը «Զեռնարկի» մեջ էջմիածինը, հին սովորության համաձայն, անվանել է կաթողիկե։

(գոված է Աղիվարդայ), Երևանի երեցներից հետո և Պտղավանքի ու Երևանի մի այլ երեցից առաջ։

Որ Երևանից այդ «Զեռնարկին» մասնակցել են երկու վաներեցներ, մեկը՝ Դավիթ անունով, մյուսը՝ Ջոջիկ, ապացույց է այն բանի, որ նա բավականին մեծ բնակավայր է եղել։ Անշուշտ այդ երեցներից մեկը Պողոս-Պետրոսի քահանա է եղել, իսկ մյուսը՝ 1679 թ. կործանիչ երկրաշարժի ժամանակ փլատակված հին տաճարներից մեկինը։

Ավան բառն, ինչպես հայտնի է, իբրև հասարակ անուն գործ է ածվում քաղաքատիպ փոքրիկ բնակավայրերի համար, բայց իբրև տեղանուն Հայաստանում հայտնի է մի քանի վայրերում։ Սակայն Աբրահամ կաթողիկոսի «Զեռնարկի» մեջ հիշատակված Ավանը Կոտայքի գավառի Ավան գյուղաքաղաքն է։ Այդ երևում է նրանից, որ Ավանից առաջ և նրանից հետո հիշատակված են նրա մերձակայքում գտնվող վանքերը։ Հետաքրքիրն այն է, որ «Զեռնարկի» մեջ ոչ մի խոսք չկա Ավանի կաթողիկոսության մասին ո՛չ մասնակցողների կազմում և ո՛չ էլ նզովքի ենթարկված հերձվածողների թվում։ «Զեռնարկին» մասնակցող բոլոր անձնավորությունները նզովել են «զամենայն հերձուածողս», որոնց թվում՝ «զԱրիոս, և զՄակեդոն, և զՆեստոր, և զԵւտիքես, և զչար ժողովն Քաղկեդոնի, և պիղծ տումարն Լևոնի» և բոլորը միավորված ընդունել են այն ամենը, ինչ որ սահմանել են հայոց եկեղեցու երանելի հայրերը։ Խոստացել են անշարժ պահել հայոց ավանդական եկեղեցին և հաղորդություն չունենալ բյուզանդականի հետ[24]։ Հակաքաղկեդոնական բնույթի այսպիսի համարձակ որոշում կայացնելուն նպաստել է Սմբատ Բագրատունու ներկայությունը, և այն, որ այդ ժամանակ պարսիկները քաղաքական կյանքում որոշ առավելության էին հասել և վտանգ կար պարսկական հարձակումների։

Կարծում ենք հենց այդ տարին էլ (607 թ.) Հովհանը փախել էր Կարին և դրանով իսկ վերջացել էր նրա հակաթոռ կաթողիկոսությունը։

Աբրահամ կաթողիկոսի «Զեռնարկին» մասնակցած Հունանեսը ներկայացել է Դվինի ժողովին ոչ թե իբրև հակաթոռ կաթողիկոսի ներկայացուցիչ, այլ իբրև վանքի երեց, իսկ այդ նշանակում է, որ այդ կաթողիկոսությունն այլևս պոյություն չուներ, իսկ Հովհանին, որ Կարնո քաղաքում էր ապաստանել, Ավանում այլևս կաթողիկոս չէին համարում։ Նորընտիր Աբրահամ կաթողիկոսի հրավիրած ժողովին մասնակցել են Արարատյան նահանգի բյուզանդական մասի հոգևորական դասի ներկայացուցիչներից շատերը։ Հովհանն ինչքան էլ որ ուզենար թաքցնել իր աթոռի քաղկեդոնական բնույթը և վայելեր բյուզանդական կայսրության ջերմ աջակցությունը, երբեք հայ հոգևորականության և ժողովրդի վստահության չէր արժանանա։

Կարելի էր ենթադրել, որ Հունանեսը Ավանի մի այլ եկեղեցու վաներեցն է եղել, մանավանդ որ Ավանում կան ևս երկու փոքրիկ եկեղեցիներ, որոնք այժմ կիսակործան վիճակի մեջ են գտնվում։ Թորոս Թորամանյանի կարծիքով այդ երկուսն էլ կառուցված են X—XIII դարերում[25]։ Դրանցից մեկը, որ Սուրբ

23 Ավան անվամբ գյուղ կա նաև Աշտարակի շրջանում, բայց նա նոր գյուղ է և հնում գոյություն չի ունեցել։

24 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 151։

25 Մի այլ տեղում Թորամանյանն այդ երկու մատուռների կառուցումը վերագրել է XIII—XIV դարերին։ Նա նշել է, որ Ավանում «Կան նաև ուրիշ եկեղեցիների կիսականգուն մնացորդներ, հավանաբար XIII—XIV դարերի» (Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, Աշխատությունների երկրորդ ժողովածու, էջ 119)։

Հովհաննես է կոչվում ըստ արձանագրության, շրջապատում ունի տապանաքարեր և մի մահարձան, որ հին է և կարող է պատկանել VI—VII դարերին։ Այդ մահարձանի վրա ուշադրություն է դարձրել նաև Թորամանյանը և գրել է, որ Հովհաննես կոչվող հետաղարյան մատուռի «մոտին կա մի մահարձան հների նման, մի կողմը երկրաչափական զարդեր. Ռ և Ռ երեսներին մուլյուրներ, իսկ Դ երեսին ոչինչ չունի»[26]։

Ս. Հովհաննես մատուռը փոքրիկ շինություն է, չէր կարող առանձին միաբանություն ունենալ և բացի այդ նա կառուցված է X դարից ոչ շուտ։ Հետևապես Հունանեսը չէր կարող այդտեղի վանքերեցը լինել։ Մահարձանը հին է, բայց կապ չունի մի քանի դար հետո կառուցված եկեղեցու հետ։

Հայտնի է, որ Հովհան Բագարանցին Մովսեսի մահվանից հետո, Վրթանես քերթողի տեղապահության տարիներին (604—607) մեծ պայքար էր ծավալել Դվինի աթոռի դեմ և նա էր, որ 606 թ. խանգարեց կաթողիկոսի ընտրությանը, երբ այդ նպատակով Հայաստանի հունաց և պարսից մասերի հոգևորականներն ու իշխանները հավաքվել էին Դվինում. ինչպես Ստեփանոս Օրբելյանն է գրում, կաթողիկոսի ընտրությունը «ոչ հաջողեցաւ այն անդամ»[27]։

Սակայն հաջորդ տարին վիճակը փոխվեց։ Սմբատ Բագրատունին, Պարսկաստանում բազմաթիվ քաջագործություններ անելուց հետո, Խոսրով Փարվեզի 17-րդ տարում, այսինքն 607 թ. գալիս է Հայաստան առաջին հերթին հայոց եկեղեցու գործերը կարգավորելու և, կարծում ենք, այդ է պատճառը, որ նա անմիջապես ձեռնամուխ եղավ կաթողիկոսական ընտրության։ Ընտրությամբ Ռշտունյաց արքեպիսկոպոս Աբրահամին հայոց կաթողիկոս նստեցրեց, ուկսեց մայր եկեղեցու վերակառուցումը, Դվինում հրավիրեց Հայաստանի Բյուզանդիային անցած մասի հոգևոր պետերի և աշխարհիկ իշխանների ժողով՝ եկեղեցու միավորման նպատակով։ Այդ նույն միջոցին էր, որ Հովհան Բագարանցին փախավ Կարին և լքեց իր աթոռը։ Դժվար չէ կռահել, որ այդ փախուստը կապված է եղել Սմբատ Բագրատունու գործունեության հետ։

Մեր մատենագիրներից երկուսը՝ Դրասխանակերտցին և Ասողիկը թվական տվյալներ ունեն Հովհան Բագարանցու կաթողիկոսության տևողության վերաբերյալ, բայց նրանց թվերի մեջ տասը տարվա տարբերություն կա։ Դրասխանակերտցին գրում է, որ Հովհանը վախճանվեց «կալեալ զաթոռ հայրապետության ամս Գզ», այսինքն 26, դրան հակառակ Ասողիկը տեղեկացնում է, որ Հովհանը «Կալաւ զաթոռն ամս 16»։ Տասը տարվա տարբերությունը, անշուշտ, հետևանք է գրչագրական սխալի և ոչ թե մատենագրական տարբերության և անկասկած է, որ ճիշտն Ասողիկն է։ Այդ գրչասխալը, ըստ երևույթին, առաջացել է շատ հնում, քանի որ XIII դարի մի քանի մատենագիրներ կրկնել են այն իրենց գործերում (Կիրակոս Գանձակեցի, Վարդան)։ Ասողիկի վկայությամբ Հովհան Բագարանցու կաթողիկոսությունը հասնում է մինչև 607 թ., որ ինչպես տեսանք, հաստատվում է այլ տվյալներով ևս, իսկ եթե ընդունելու լինենք Դրասխանակերտցու առաջարկած թվականը, Հովհանի կաթողիկոսությունը բերելու և հասցնելու ենք մինչև 617 թ., որ բոլորովին չի համապատասխանում այդ ժամանակների պատմական անցքերին։

---

26 Թորամանյան, նշվ. աշխ., հատ. Ռ, էջ 119։

27 Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 98։

Հովհան Բագարանցու ժամանակի վերաբերյալ բոլորովին սխալ տեղեկություն է տալիս XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին։ Հակառակ դեպքերին ժամանակակից Սեբեոսի, որը Հովհան հակաթոռին իրավացիորեն համարում է Մովսես Եղվարդեցու (574—604) ժամանակակից, ասելով՝ «Բաժանեցաւ ապա և աթոռ կաթողիկոսութեանն յերկուսս. անուն միոյն Մովսէս, և միւսոյն՝ Յոհան։ Մովսէս ի Պարսից կողմանէ, և Յովհան՝ Յունաց»[28], Կիրակոս Գանձակեցին Հովհանին համարում է Աբրահամ Աղբաթանեցու հաջորդ։ Նա գրում է. «Եւ յետ տեառն Աբրահամու առնու զկաթողիկոսութիւնն տէր Յոհան, ի Կոգովտէ, ի գեղջէ Բագրանէ, ամս քսան և վեց. ոմանք ի պատմագրաց զերկոսեանն ի միում ամի ասեն վախճանեալ զԱբրահամ և զՅոհան, և կէսքն՝ ոչ»[29]. Գանձակեցու գրածի անճշտությունը հայտնի է դառնում թեկուզ միայն նրանով, որ, ինչպես հայտնի է, Աբրահամը կաթողիկոս է եղել 607 թ. մինչև 615-ը, երբ Մորիկ կայսրը վաղուց արդեն վախճանվել էր (նրան սպանել են 602 թ.), հետևապես նա չէր կարող իր մահվանից հետո հակաթոռ կաթողիկոսություն ստեղծել Ավանում։ Եթե Գանձակեցուն հավատանք, Հովհանը կաթողիկոս է եղել 26 տարի և հաջորդել է Աբրահամին, նշանակում է նրա կաթողիկոսությունը հասել է մինչև 640-ական թթ., որ բացարձակ սխալ է։ Այդ ժամանակամիջոցում, ինչպես հայտնի է, կաթողիկոս են եղել Կոմիտաս Աղցեցին (615—628), Քրիստափոր Ապահունին (628—630), Եզրը (630—641)։ Գանձակեցու այս սխալը առաջ է եկել այն բանից, որ նա Հովհան Բագարանցուն դրել է հայոց կաթողիկոսների շարքի մեջ, առանց ուշը դարձնելու, որ նա հակաթոռ է եղել և չի հաջորդել կամ նախորդել հայոց կաթողիկոսներից և ոչ մեկին։

Այս բոլորից եզրակացնում ենք, որ Հովհանի փախուստը դեպի Կարին տեղի է ունեցել 607 թ. և դրանով էլ վերացել է Մորիկ կայսեր հիմնած Ավանի հակաթոռ կաթողիկոսությունը։

Եթե 607 թ. Հովհանն իր աթոռի վրա լիներ և իշխանություն ունենար Հայաստանի բյուզանդական մասի եկեղեցիների վրա, նա չէր թույլ տա, որ իր իշխանության ներքո գտնվող հոգևորականները Աբրահամի հրավերով գնային Դվին և այնտեղի աթոռին հավատարմության երդում տային։

Երևի Հովհան հակաթոռի շուտափույթ փախուստն է պատճառը, որ Սիմեոն Երևանցին գրել է. «Տէր Յոհան ի Կոգովտայ, որ ընդ դէմ Աբրահամու նստաւ ի Կարին, և մեռաւ յառաջ քան զԱբրահամն։ Սա հետևեցաւ աղանդոյն քաղկեդոնի»[30]։

Նկատելի է, որ Մորիկ կայսեր սպանությունից հետո (602 թ.), Ավանի կաթողիկոսությունը անկում է ապրել, իսկ Դվինի հայոց կաթողիկոսներն էլ ամեն կերպ աշխատել են մեկուսացնել Ավանը և շրջապատի վանքերն ու բյուզանդական իշխանության տակ գտնվող հոգևորականներին ազատել նրա ազդեցությունից։ Հասկանալի է, որ անկման շրջանում չէր կարող կառուցվել Ավանի տաճարը։ Նրա կառուցումը պետք է դնել ավելի առաջ, մինչև Մորիկ կայսեր մահվան թվականը։

---

28 Սեբեոս, էջ 84։

29 Կիրակոս Գանձակեցի, էջ 50։

30 Սիմեոն կաթ. Երևանցի, Ջամբռ, դիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ..., Վաղարշապատ, 1873, էջ 13։

Ավանի տաճարի կառուցման թվականի մասին հայ և օտար գիտնականները հայտնել են ինչ որ չափով տարբեր կարծիքներ, որոնց զանազանությունը տասնյակ և ավելի տարիների է հասնում։

Ինչպես հին մատենագիրները, այնպես էլ նոր և նորագույն ուսումնասիրողները Ավանի տաճարի կառուցումը կապում են Հովհան Հակաթոռի հետ, բայց ուսումնասիրողներից մի քանիսը տաճարի շինությունը վերագրում են Հովհանի դահակալության առաջին տարիներին, VI դարի վերջին տասնամյակին, իսկ ոմանք էլ կառուցման թվականը հետ են բերում մինչև Հովհանի դահակալության վերջին տարին՝ մինչև 609 կամ 611 թթ.։

Թորոս Թորամանյանն իր աշխատությունների մեջ բազմիցս անդրադարձել է Ավանի տաճարին և նշել է կառուցման հավանական թվականները, որ VI դարի վերջն է։ Նա գրում է, որ Ավանի տաճարի «շինողն է Հովհան Բաղարանցի հակաթոռ կաթողիկոսը (590—611)։ Այս եկեղեցին շիներ է իբրև կաթողիկոսական եկեղեցի, դահակալության սկզբին՝ VI դարու վերջին։ Ինքն ալ թաղված է այս եկեղեցվո մոտ»[31]։

Նիկոլայ Տոկարսկին «Ակնարկներ հայ ճարտարապետության պատմության» գրքում Ավանի տաճարի կառուցման թվականի մասին որոշակի բան չի ասում։ Հայաստանում կառուցված այդ նույն ոճի բոլոր տաճարները (Ավան, Արամուս, Թարգմանչաց վանք, Հռիփսիմե, Ադիաման, Սիսավան) վերագրում է VI և VII դարերին և գտնում է, որ նրանց մեջ հնագույնը Ավանի տաճարն է[32]։ Տոկարսկու գրածից եզրակացնում ենք, որ Ավանի տաճարը նա համարում է կառուցված VI դարում։

Ռուբեն Աղաբաբյանը, որ ուսումնասիրել է Հայաստանի և Վրաստանի կմբեթավոր տաճարների կառուցվածքը, Ավանի տաճարի շինության թվականը անորոշ է թողնում՝ հայտարարելով, որ նա կառուցված է Հովհանի կաթողիկոսության տարիներին՝ VI դարի վերջին և VII-ի սկզբներին, մինչև 609 թ., որ համարվել է Հովհանի կաթողիկոսության վերջը[33]։

Հռիփսիմեի տաճարի վերաբերյալ հատուկ ուսումնասիրության հեղինակ Ալեքսանդրա Երեմյանը իր աշխատության մեջ քննել է նաև ճարտարապետական նույն ոճն ունեցող հայկական մյուս տաճարները։ Նա Ավանի տաճարը համարել է VI դարում կառուցված եկեղեցի։ VI դարին է վերագրել նաև Արամուսի նույնատիպ տաճարը[34]։

Անատոլի Յակոբսոնը Ավանի տաճարը համարում է VI դարի վերջի և VII-ի սկզբի (մինչև 609 թ.) գործ[35]։

Այդ նույն ժամանակին է վերագրել Ավանը Ստեփան Մնացականյանը[36]։

Արվեստի պատմաբան Գեորգի Զուբինաշվիլին, որ սովորաբար հայկական միջնադարյան հուշարձանների տարիքը երկու-երեք հարյուրամյակով պակաւեցնում է, Ավանի նկատմամբ իր այդ սովորությունը չի կիրառում, այլ հետե-

---

31 Թորոս Թորամանյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 245։

32 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1966, էջ 121։

33 Р. Я. Агабабян, Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950, էջ 59։

34 А. Б. Еремян, Храм Рипсимэ, Ереван, 1955, էջ 6 և 91։

35 А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII вв., М.—Л., 1950, էջ 19։

36 «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 146։

վելով ուրիշների օրինակին (Strzygowski) Ավանի տաճարը վերագրել է VI դարի վերջի և VII դ. առաջին տասնամյակներին, բայց ամեն կերպ աշխատել է նսեմացնել տաճարի ճարտարապետական բարեմասնությունները[37]։ Իր՝ վերջերս հրատարակած Հայոց ճարտարապետության վերաբերյալ խոցելի աշխատության մեջ, երբ Ավանի տաճարը համեմատության է դնում Վրաստանի ս. Խաչ (Ջվարի) եկեղեցու հետ, մոռացության է տալիս Ավանի տաճարի կառուցման մասին իր իսկ որոշած և բազմիցս հրատարակած թվականները և ուսենալով նախապատվություն տալ Մցխեթի ս. Խաչին, հայտարարում է, որ վերջինս կառուցվել է VI դարի 90-ական թվականներին, իսկ Ավանի եկեղեցին՝ VII դարի առաջին տասնամյակում[38]։

Սակայն Մցխեթի ս. Խաչ եկեղեցու հայերեն և վրացերեն կառուցման արձանագրությունը, գրված մի քարի վրա, որ այժմ տեղից հանված պահվում է Վրաստանի թանգարանում, ցույց է տալիս և վկայում, որ այդ եկեղեցին կառուցվել է ոչ թե VI դարի 90-ական թվականներին, ինչպես ենթադրում էր Գեորգի Ջուբինաշվիլին, այլ 600—604/5 և 627—642 թթ.՝ տևական ընդմիջումով, այսինքն շատ ավելի ուշ, քան թե կառուցվել է Ավանի տաճարը, այն էլ հայ վարպետների մի մեծ խմբի մասնակցությամբ, որին ղեկավարել է Ատենի ս. Սիոն (Գորի քաղաքի մոտ) նույնատիպ տաճարի կառուցող ճարտարապետ Թոդոսակը[39]։

Կարծում ենք, որ Ավանի տաճարի կառուցումը որոշակի կերպով պետք է դնել VI դարի մեջ և ոչ թե VII դարի մինչև 9 կամ 11 թվականները, ինչպես այդ անում են ուրիշները։

Հովհան յոթ տարի Ավանում կաթողիկոսական աթոռի վրա մնաց մինչև 607 թվականը, բայց մինչև այդ նա իր աթոռը վարել էր 590 թ. մինչև դարավերջը՝ 600 թ.։ Պարզ է, որ նա եկեղեցին պետք է կառուցեր ոչ թե իր գահակալության վերջին տարիներին, այլ սկզբին, նույնիսկ ավելի առաջ, քան գահի վրա նստելը, այլապես պետք է ենթադրենք, որ այդ Հովհան հակաթոռն առանց եկեղեցու է սկսել իր գործունեությունը Ավանում։

Հովհանը կաթողիկոսական աթոռը հիմնելուց առաջ պարտավոր էր կատարել որոշ նախապատրաստական աշխատանք։ Նա պետք է ընտրեր աթոռի համար հարմար մի վայր, նշանակեր միաբաններ, լուծեր տնտեսական և այլ հարցեր, կառուցեր եկեղեցի։ Նա այդ բոլորը կատարել էր կաթողիկոս ձեռնադրվելուց առաջ։

Ինչպես Սեբեոսն է հաղորդում, Հովհանը կաթողիկոս է նշանակվել իր ծերության հասակում, երբ նա ճանաչված հոգևորական էր։ Սեբեոսն ասում է՝ «Երանելի ծերունի կաթողիկոսն Հովհան ի գերութիւն վարեցաւ»։ Հարց է առաջ գալիս, թե մինչև կաթողիկոս դառնալը որտե՞ղ էր և ի՞նչ էր անում։ Միայն գիտենք, որ նա Կոգովիտ գավառի Բագարան գյուղից էր և հավանաբար այնտեղ էլ հոգևորական էր գարձել։ Պատմիչների ասելով օրինակելի և հեղինակություն ունեցող հոգևորական է եղել։ Անշուշտ կաթողիկոս դառնալուց առաջ նա իր հիմնադրած Ավանի տաճարի վանահայրն է եղել և այդ տաճարը կառուցել է ավելի շուտ, քան կաթողիկոս դառնալը։

---

37 Г. Н. Чубинашвили, Памятники типа Джвари, Тбилиси, 1967, էջ 37։

38 Его же, Разыскания по армянской архитектуре. Тбилиси, 1967, էջ 37։

39 П. М. Мурадян, Армянская надпись храма Джвари, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, № 2 (297), էջ 55—80։

Այդ են ապացուցում Ավանի տաճարի կառուցվածքի մեջ աչքի ընկնող խիստ արխաիկ ձևերը, որոնք շատերին զարմանք են պատճառել։ Կամարների պայտաձևությունը, արևմտյան մուտքի ձևավորումը, որի նմանությունը V—VI դարերի տաճարների մուտքերին բազմիցս նշել են ուսումնասիրողները, գմբեթի հիմքի քառակուսուց բազմանկյունու անցնելու եղանակը, պսակները և շատ այլ մանրամասնություններ, որոնք հատուկ են V—VI դարերին և բոլորովին չեն կապվում VII դարի հետ։

Այս բոլորի հիման վրա Ավանի տաճարի կառուցումը վերագրում ենք VI դարի երկրորդ կեսին և ոչ թե նրա վերջին կամ VII դարի սկզբներին։

Ավանի տաճարի կառուցման ժամանակի խնդրին մենք մեծ կարևորություն տվինք այն պատճառով, որ, ինչպես ասել ենք, նրանով հիմք է դրվել շարտարապետական կառուցվածքների մի նոր տիպի, որը հետագայում տարածվեց Հայաստանում և կատարելության հասավ 618 թ. Էջմիածնում կառուցված Հռիփսիմեի հորինվածքի մեջ։

Այսօր 2750-ամյա Երևան քաղաքի ծոցում պահվող ճարտարապետական այդ դոհարը խնամքով պահպանվում, վերանորոգվում, բարեկարգվում և բազմակողմանիորեն ուսումնասիրվում է ի փառս հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի։

ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ ОБ АВАНСКОМ ХРАМЕ

(К 2750-летию со дня основания Еревана)

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Резюме)

На основании фактов и сведений древнеармянских историков автор статьи приходит к заключению, что находящийся в черте современного Еревана Аванский храм построен не в последнем десятилетии VI в. или в начале VII в. н. э., как предполагают исследователи (Т. Тораманян, Ж. Стриговский, Н. М. Токарский, Р. Я. Агабабян, Т. Н. Чубинашвили и др.), а во второй половине VI в., еще до основании Аванского католикосата в 590 г.

Аванская церковь является первым из известных нам образцов нового типа армянских архитектурных сооружений (типа Рипсиме), особенности которого быстро распространились по всей Армении и за ее пределами.